ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ
"NATIONAL BUREAU OF EXPERTISES" SNPO

0004, ք. Երևան, Իսակովի պող. 24
24 Isakov Ave. 0004, Yerevan

Tel :(37410) 77-77-10
Fax: (37410) 77-77-04

Հարգելի՛ պարոն Առաքելյան

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի անձնակազմի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ և Ձեր գործընկերներին՝ Արդարադատության ակադեմիայի հիմնադրման 10-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Արդարադատության ակադեմիան անցած տասնամյակի ընթացքում ձևավորել է մասնագիտական բարձր գիտելիքներով օժտված փորձառու անձնակազմ և բացառիկ կարևոր դեր ստանձնել Հայաստանի Հանրապետության դատաքննչական իրավասու մարմինների աշխատողների, դատավորների և դատախազների, դատական և պետական իրավասու այլ ծառայողների աշխատանքային հմտությունների ձևավորման և կատարելագործման, մասնագիտական գիտելիքների ընդլայնման, կրթական ծրագրերի հաջող իրականացման գործում:

Առանձնահատուկ է Արդարադատության ակադեմիայի յուրօրինակ դերն ու նշանակությունը հատկապես Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի գործունեության արդյունավետության շարունակական բարձրացման, ըստ այդմ մեր երկրում իրավակարգի ամրապնդման և օրենքի գերակայության ապահովման գործընթացում, որի բարձր պատասխանատվությամբ և նվիրումով իրականացումը ներդրված ջանքերի շնորհիվ արդեն կայացած իրողություն է:

Կարևոր է նաև ընդգծել Արդարադատության ակադեմիայի և Փորձաքննությունների ազգային բյուրոյի միջև ձևավորված բարձր մակարդակի գործընկերային փոխհարաբերությունները, գիտագործնական և կրթական գործընթացներում առկա արդյունավետ փոխինտեգրվածությունը՝ ի նպաստ ոլորտի գիտականահեն զարգացման ապահովմանն ու բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված կադրերի պատրաստմանը:

Մաղթում եմ Ձեզ և բոլոր գործընկերներին քաջառողջություն, անկոտրում կամք և նվիրում, աշխատանքային նոր ձեռքբերումներ և նվաճումներ՝ Արդարադատության ակադեմիայի առջև դրված նպատակների հետագա հաջող իրականացման համար:

Թո՛ղ Արդարադատության ակադեմիայի գործունեության ապագա տարիները ևս նշանավորվեն նոր ու կարևոր ձեռքբերումներով և նվաճումներով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

13.09.2023թ.